№ 17 15 ՅՈՒԼԻՍ 1896

ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ



Եւրոպական կառավարութիւնների պաշտած Մօլոխ-սուլթանի մէջ զազանութիւնը ամրացնելու համար՝ Պոլսում կախաղան բարձրացրած երեք յեղափոխականների՝ ՅՈՎՍԷՓԻ, ԳԷՈՐԳԻ եւ ԳԱՐԵԳԻՆԻ պատկերները՝ նկարած դազաղում: Ցաւում ենք, որ չորրորդ նահատակի՝ ԳԱԼՈՒՍՏԻ պատկերն ստացած չլինելով, չկարողացանք դնել իր վիճակակից անծնազոհների կողքին:

ԿԱԽԱՂԱՆ

Պոլսոյ եղեռնադատ, լաւ ևս եղեռնագործ ատենի որոշումով և մարդակեր սուլթանի իրատեւով կախաղան հանուեցան նոր երկու անձնուրաց յեղափոխականներ ալ: Մէկը Պրուսայի Զէնկիլէր գիւղէն և Իսկիւտար պարտիզպանութիւն ընող Թոփուեան **ԳԱՐԵԳԻՆ**, միւսը կօշկակար Ասատուրեան **ԳԱԼՈՒՍՏ**. առաջինը կամբաստանուէր տարի մը առաջ՝ եօզկատցի մատնիչ և դաւաճան Սենեքերիմի և երկրորդը՝ նոյնպէս եօզղատցի մատնիչ Համբարձումի սպանիչ:

Երկուքն ալ կախուեցան Գարաքէոյի կամուրջին Պոլսոյ կողմը. առաջինը յունիս $^{12}/_{24}$-ի, երկրորդ $^{19}/_{1}$-ին:

Այս թիւի մէջ կը դնենք, մեր ընկեր **ԱԲՐՕՅԻ** վաղահաս և սրտաճմլիկ մահուան ու գործունէութեան համառօտ նկարագիրը:

Աբրօն մեր փորձառու, անվեհեր, անխոնջ և իր բոլոր ընկերներէն սիրուած ժողովրդական գործիչներէն մէկն էր: Հենց այն ժամանակ, երբ յեղափոխական քարոզչի գաւազանը ձեռքը կը թափառէր Սասունի աւերակներուն մէջ, խրախուսանք կը կարդար թշնամիին հարուածը կրած այդ քաջ ժողովրդին, անոնց յոյս և կուելու եռանդ կը ներշնչէր, անակնկալ կերպով զոհ գնաց, այն ալ ոչ կռուի դաշտին վրայ և ոչ ալ հրացանը ձեռքը:

Իր մահը, մեծ կորուստ մ'է իր սիրական ընկերներուն համար: Աբրօի անուան քաղցրիկ յիշատակը անշէջ կը մնայ իր գաղափարակիցներու և իր պաշտած ժողովրդի սրտին մէջ:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐ

Մայիսի սկզբներում՝ Պարսկա-Ցաճկական սահմանագլխում մի ընդհարման մէջ, որ տեղի ունեցաւ սահմանագլխի քրդերի հետ, նահատակուեց հռչակաւոր հայդուկ ՑԵՐՕՆ իր շատախցի ՍԱՆՈՒԿ և կարճեանցի ՑԱԿՈԲ ընկերներով։

Քրդերից ընկան 9 հոգի և 5 վիրաւոր։ Ընդհարման մանրամասնութիւնները և նահատակների կենսագրութիւնը կը տանք շուտով։

ՏԵՐՐՕՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԿԱՐԻՆՈՒՄ

Երեկ երեկոյ, ժամը 7-ին (ը. ե.), քաղաքի Կանաճամբայ ըսուած մասի մէջ „Դաշնակցութեան“ ահաբեկիչներէն մին գնդակի հարուածով կամեցաւ պատժել դաւաճան և մատնիչ բօլիս ՄԿՐՏՉԻՆ, բայց դժբաղդաբար արձակուած գնդակը փափագելի հետեւանքը չունեցաւ։ Ահաբեկիչը ազատ է։ սարսափը ընդհանուր։ Մանրամասնութիւնները „Դրօշակ“-ի մէջ։

ՎԱՆԻ ԿՌԻՒԸ

ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎՐԱՑՈՎ)

1-ին յուլիսի

Վանի զօրքերը և քրդերը առանց պատճառի կոտորեցին։ Հայ թաղերը ռմբակոծուեցին. հիւպատոսների պահանջումով 2000 զինուած հայ գնացին Վարագ. Դրանցից 750-ը Բարդուղիմէոս վանքի մօտ պաշարուած է։ Պարսկաստան անցնելու յոյս չկայ։

* * *

6-ին յուլիսի

Հայերը հինգ օր իրենց պաշտպանեցին։ Կառավարութիւնը դրանց դէմ թնդանօթներ դուրս բերաւ։ Հիւպատոսների յորդորանքով 1000 հոգի, որոնց մէջ 200 զինուած, ճանապարհուեցին դէպի Պարսկաստան։ Ճանապարհին ամենքը ջարդուեցին, բացի 150 հոգուց բաղկացած մի զինուած խումբ, որ Պետոյի առաջնորդութեամբ անհետացաւ։ Վանը ռմբակոծուած և շրջակաները աւերուած են։

* * *

11-ին յուլիսի

Պետոյի և Մարտիկի միացած խմբերը Ցաճկա-Պարսկական սահմանագլխի մօտ 3 տաժանելի կուրից յետոյ ջարդուեցան. դրանցից մէկ հոգի սահմանը անցնելով փախաւ։

* * *

(ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ)

Խմբագրութեանս հասած երկու հեռագիրները և եւրոպական թերթերուն մէջ երևցած հատուկտոր տեղեկութիւնները ենթադրել կուտան, թէ Վասպուրականը խիստ դժնդակ կացութեան մէջ է։

Իսկ այս աղէտներէն յետոյ երրորդ և սոսկալի աղէտի մը գոյժն է, որ հեռագիրը կը բերէ մեզի։ Պետոն և Մարտիկ միացած՝ Պարսկա-Ցաճկական սահմանագլխին վրայ իրենց խմբերով թշնամու դէմ երեք ահեղ կռիւ մէջ կը ջարդուին։ Դեռ յայտնի չէ թշնամիին կորուստը և ոչ ալ մեր հերոսներուն իսկական մահը։ Բայց մեր քաջերը անոնցմէ էին, որոնք իրենց կեանքը ազատ ծախէին։ Այս դժնդակ լուրէին, մեր կտրիճ հերոսներու մահը, կսկիծով կը լեցնէ մեր հոգին. անմոռանալի է այդ հարուածը. այլ կը մխիթարուինք խորհելով թէ՝ այդ թափուած արիւններու անձնիւր կաթիլէն նորանոր անձնազոհներ պիտի ծնին։

Սակայն դժբախտաբար դեռ կը պակսին բուն իրողութիւնը ի վեր հանող մանրամասն և որոշ լուրեր։

* * *

Արտասահմանի թերթերուն մէջ երևցող լուրերուն շատը թրքական աղբիւրէ են, և հետևապէս անվստահելի։ Այդ լուրերը իրենց կցկտուր վիճակին մէջ կը փութանք հրատարակել, մինչև որ բուն, հաւաստի տեղեկութիւններ հասնին մեզի։

Երբ Վանի մասին երկիւղալի լուրեր կը հասնէին, Գամբոն, ֆրանսական դեսպանը պահանջեց թիւրք կառավարութենէն, որպէսզի զօրքերուն թիւը աւելցնէ քաղաքին մէջ, իբր թէ քիւրդերուն արշաւանքին դիմադրելու. բայց իսկապէս ապստամբութիւնը իր ծագմանը մէջ խեղդելու համար։

Վանի իշխանութիւնք հիւպատոսներուն և անոնց գործակալներուն Միջնաբերդին մէջ ապաւէն տուին. իսկ հայր Ցըֆրանս, Դոմինիկեան մեծաւորը, որուն յանձնուած է, Գամբոնի կողմէ, ֆրանսական շահերու պաշտպանութիւնը, նախընտրեց մնալ քրիստոնեաներուն մէջ, անոնց երկիւղը չի սաստկացնելու համար։

„Տան“-ի թղթակիցը կը գրէ՝— „Վանի խռովութեան պատասխանատուն միայն հայերը չեն։ Կայսերական պատուիրակ Սաատին փաշա, որ Վան կը կենար, քանի

ամիսէ ի վեր նկատած էր վտանգը և յեղափոխականներուն ծրագիրը իմացած էր։ Այս պարագային փոխանակ բանակին և ոստիկանութեան կոչում ընելու, քիւրդերուն հետ յարաբերութեան մէջ մտաւ և կարծեց թէ՝ շատ ճարպիկութեամբ կարող է, զանոնք համախմբելով՝ ձեռքի տակ մեծ ոյժ գոյացնել հայկական յեղափոխութիւնը ընկճելու համար։ Այդ ժամանակ աւարառուները՝ դէպքը պատահելէն առաջ, քաղքին շուրջը կը սլքտային արդէն"։

Հայր Ցըֆրանս կը հեռագրէ՝ թէ քիւրդերը Վանի վրայ կը քալեն։

Գամբոնի պահանջման վրայ 5 գումարտակ զօրք ղրկուեցաւ Վան հայերը պաշտպանելու (՞) քրդերու յարձակման դէմ և նոր անկարգութիւններու առջևը առնելու համար։

Վանի մէջ արիւնահեղ կռիւ մը միջոցին 400 հոգի մեռած և բազմաթիւ հայեր անգլիոյ հիւպատոսարանը ապաստանած են։

Դուռը ինքնաբերաբար դիմեց դեսպաններուն, որպէսզի հիւպատոսները Վանի հայերուն և տեղական իշխանութեանց մէջ համաձայնութիւն գոյացնեն։ Ահա այդ համաձայնութեան գլխաւոր հիմերը՝ „օտարահպատակ հայերը պիտի արտաքսուէին և թրքահպատակ գլխաւոր յանցաւորները պիտի յանձնուէին թիւրք կառավարութեան, ատոր փոխարէն՝ բոլոր մնացածներուն կատարեալ ներում պիտի շնորհուէր"։ Հայերը շատ խստապահանջ գտան սոյն պայմանները և յանկարծ իբր թէ ռուսաստանցի յեղափոխականները, իրենց համախոհ թրքահայերուն հետ, թողուցին քաղաքը գացին։ Այսպէս իրենց դիրքը ձգել երթալը, որուն տիրացած էին, շատերու մէջ կարծիք առաջ բերաւ թէ անոնք խռովարարական գործակալներ են։

Վանի խռովութեան միջոցին 500 հայեր՝ դէպի Պարսկաստան խոյս տուած ատեն՝ իրենց ճամբուն վրայ գըտնուած մահմեդական գիւղերը իբր թէ այրած են։

Քիւրդերը Վանի շուրջը բազմաթիւ հայ գիւղեր կործանեցին և 8 տարեկանէ վեր արու բնակիչները կոտորեցին։

Թիւրքաց պաշտօնական աղբիւրը կը հերքէ այս լուրը։

Վերջին անկարգութեանց մասին ահաւասիկ թիւրքաց պաշտօնական զեկուցումը.

Պարսկաստանի Շէկակ, աստանդական ցեղերը Վասօի, Ջէլլադի, Մէհէմմէդի առաջնորդութեամբ սահմանագլուխը անցան։ Ասոնք մտան Կէվարտ, Էլպաք և Մահմուդ նահանգներուն մէջ և ինչ որ գտան իրենց ճամբուն վրայ աւարեցին և կոտորեցին։

Առիթէն օգուտ քաղելով շատ մը հայ յեղափոխականներ, շէկակներու հետ խօսք մէկ ըրած, մտան Տաճկաստան, գործեցին ամէն ծայրայեղութիւն և Վանի շրջակայքները գտնուած իրենց կրօնակիցները ապստամբութեան դրդռեցին։

Թէհրանէն կը հեռագրեն „Ցէյլի-Նիւղին"—Թիւրքաց սահմանին վրայ Վանէն փախչող հայերուն և քիւրդերուն միջև արիւնահեղ կռիւներ տեղի ունեցան։ Շատ մը հայեր սպաննուեցան և գրեթէ բոլորն ալ կողոպտուեցան։

ԻԶԷՆ

—

Հայաստանի մէջ քստմնելի գազանութիւնները շարունակուում են։

Շահամոլ Եւրոպայի աչքերի առջև անզուսպ ասիական բռնաճաչը կատաղած գազանի նման կոտորում է աջ ու ձախ, աւերում գիւղեր, ոմբակոծում քաղաքներ, սովի և գազթի դատապարտում միլիոնաւոր աշխատասէր ժողովուրդ։

Անտանելի լուծի տակ հեծում են հայ, կրետացի, մակեդոնացի, արաբ, դրուզ և այլն, իսկ Եւրոպան զբաղուած է վաճառականական հաշիւներով։ „Ուղղափառ" ցարի հետ միացած ֆրանսիական կառավարութիւնը, խրախուսում են լկտի հրէշին, հարէմի որձին և ցնծալի աղաղակներով խմում նրա կենացը։

Այն Եւրոպան, որը ինքն դարերով արիւնահեղ կռիւներ է մղել բռնակալների դէմ, մինչև որ կարողացել է ձեռք բերել անհատական ազատութիւն՝ այժմ ինքն իւր անբարոյական կառավարութիւնների ձեռքով դիպլոմատիքական անխիղճ խաղերի առարկայ է շինել նոյն նպատակին դիմող միլիոնաւոր անպաշտպան մի ժողովրդի կեանքը։

Բուրժուական Եւրոպայի Աստուածն լինելով շահը՝ նրա թէ ներքին և թէ արտաքին ամէն ձեռնարկութեան նպատակը լոկ կապիտալի շահաւոր գործածութիւնն է։

Ի հարկէ, այդ զանազան Լօբանով, Հանօտօ, Սօլիսբիւրիները դիվպլոմատիկական անխիղճ խաղեր և ստոր խաբեբայութիւններ անելիս ծածկում են իրենց կեղտոտ նպատակներն „ժողովրդի, ազգի" շահերի փքուն խօսքերի տակ, բայց ո՞ր միամիտը չգիտէ, որ աշխատաւոր դասին՝ գիւղացուն կամ պրոլետարիային՝ բնաւ ձեռնտու չէ և ցանկալի մի այլ ժողովրդի դժբախտութիւնը կամ կորուստը. այդ միայն բռնակալների և բուրժուազիայի ստոր, եսական շահերն են ստիպում զանազան շինծու ուրվականներով գրգռել ազգերի մէջ փոխադարձ ատելութիւն։

Եթէ մի սուլթան իր ապուշ ծառաներով կամենում է մեռցնել հայ ժողովուրդը, որովհետև դա այլևս չի ուզում լինել հարստահարուած մի դրաստ կամ անվերջ տանջանքների և անարգանքների մատնուած մի խրտուիլակ.

եթէ ցարը իրեն շրջապատող կամարիլիայով նոյնն է ցանկանում, որովհետև քիչ է համարում բռնակալական լուծի տակ տնքող լայնածաւալ մի պետութեան հարիւր միլիօն ժողովուրդ և աչքերն տնկել է կազմալուծուղ լեշի, Թիւրքիայի, մի պատառի՝ Հայաստանի վրայ. եթէ բուրժուական Եւրոպան, քծնելով հիւսիսային արջի կոպիտ ոյժի առաջ, թոյլ է տալիս կատաղած սուլթանին աւերումներ գործելու, որովհետև փայփայում է իրեն ձեռնտու հասարակական անհաւասար կարգերն, որոնք միջազգային պատերազմի շնորհիւ սոցիալական հրդեհի զոհ կարող են լինել՝—այդ բոլորից երբէք չի կարելի եզրակացնել, որ բուն ժողովրդների, աշխատաւոր դասակարգի շահերն են այդպէս թելադրում: Ո՛չ մի ժողովուրդ մեղաւոր չէ իր պառնիկ կառավարութեան կատարած անխիղճ, տմարդ գործողութիւնների մէջ:

Տեսէ՛ք ինչպէս շանտաժային, թեթևամիտ ֆրանսիական կառավարութիւնը քծնում է տհաս ցարի բռնակալ կառավարութեան առաջ: Տեսէ՛ք փոփոխամիտ, ինքնահաւան Վիլհելմը, որի համար ամբողջ հայ ազգը մի գերմանական զինուոր չարժի, ի՞նչպէս է շողոքորթում Ռուսաստանի բարեկամ ողորմելի Զինաստանի ներկայացուցչին, յոյս ունենալով իր կապիտալիստների համար նրանից մեծագումար պատէրներ ստանալու և իր օֆիցերների համար՝ չինական զօրքում պաշտօններ:

Տեսէ՛ք զանազան ազգերի կարկատան Աւստրիայի դիպլօմատն ի՞նչպիսի ապլօմբով յայտնում է ի լուր աշխարհի, որ ինքն է փրկել „Եւրոպական խաղաղութիւնը", այսինքն՝ հնար է տուել սուլթանին առանց արգելքի, իր գիտցածի համեմատ՝ հրի, սրի, բանտերի և կախաղանների միջոցով կարգադրել հայերի „խաղաղացման" գործը: Տեսէ՛ք դիպլօմատիկական խաբեբայութիւնների մէջ տարիներով փորձւած յետադէմ կարգերի մեծ պաշտպան Սօլսբիւրին ի՞նչպէս է հիմա առանց կարմրելու յետ լիզում իր թուքը, որ կպել էր սուլթանի լիրբ երեսից: Ահա այդպէս են բուրժուական եւրոպայի ղեկավարները:

Իսկ եւրոպական հասարակութեան ահագին մասը՝ հասարակական կարգերի հիմք դարձած անհատական սեփականութեան շնորհիւ, ստիպւած է զբաղւել իր ապրուստի հարցով, մաքառելով գոյութեան կռւի սաստիկ դժւարացած պայմանների դէմ. այդ է պատճառը, որ նա քիչ է յուզւում՝ լսելով հայկական սարսափների մասին: Թէև նա, դրդւած մարդասիրական զգացմունքից, այս ու այնտեղ օգնութեան ձեռք է մեկնում Համիդի կատաղութեան զոհ դառած հաղարաւոր սոված, տկլոր, անտուն հայերին, սակայն ո՞վ չգիտէ, որ այդ բարեգործութիւնը անկարող է մաղաչափ լուծել հայկական խնդիրն, ցամաքեցնել անբաւ թշւառութիւնների հեղեղը:

Այսպէս ուրեմն, եւրոպական կառավարութիւնները, որոնք հեշտութեամբ կարող էին վերջ դնել հայ ժողովրդի անբաւ թշւառութիւններին, ոչ միայն ոչինչ չարին, այլ իրենց փոխադարձ ատելութեամբ ու նախանձով միմիայն խրախուսեցին հարէմի որձի՝ Համիդի վայրագ գազանութիւնները: Եւրոպական կառավարութիւնների ստոր, անամօթ ներկայացուցիչները իրենց փառաւոր բնակարաններից հանգիստ դիտում էին Պոլսի բազմամարդ հրապարակներում կանգնեցրած կախաղաններից ճօճւող հայ նահատակների մարմինները և առանց խղճահարւելու լսում էին վանում ռմբակոծւող անպաշտպան հայ բնակիչների աղեխարշ լացն ու կոծը...

Ահա թշւառ հայ ժողովուրդ, վերջին երեք տարիների դառն, արիւնաշաղախ փորձերը միայն եկան քո բազմաչարչար գլխին կրկին ապացուցանելու քեզ քո հարազատ զաւակների՝ հայ յեղափոխականների՝ մշտական քարոզը. չհաւատալ անխիղճ դիպլօմատիայի խաբուսիկ խոստումներին, այլ կազմակերպել սեփական ոյժերով ահեղ ընդդիմադրութիւն տմարդ բռնութեան, որովհետև շահամոլ եւրոպան արդարութեան կողմը չէ, այլ միմիայն բուրժուազիայի շահերի. նեղւածների կողմը չէ, այլ կոպիտ ոյժի: Նա հետևելով „ուղղափառ" ցարի փափագին զօրացնում է „ուղղահաւատ" դահիճի բազուկը և ասում հայ ժողովրդին՝ „խոնարհւի՛ր այդ գազանի առաջ, անմռունչ ծռի՛ր վիզդ մարդակերի սրի տակ, որովհետև իմ շահադիտական նկատումները այդ են պահանջում":

Հա՛յ ժողովուրդ, մի՞թէ դու անբան ոչխարի պէս պէտք է խողխողւիս կամ փոքրոգութեամբ յուսահատւիս, դիմելով գազթականի անպատիւ, սովատանջ մահին: Ո՛չ, քաջ կրեստացին քեզ լինի օրինակ: Դու պէտք է պատասխանես չարչի եւրոպային և նրա հովանաւորութեամբ լրբացած Համիդին. „ես ազատ կեանք եմ ուզում, իսկ թէ ինչպէս մեռնել՝ այդ ձեզնից լաւ գիտեմ": Անհաշտ կռիւը փրկութեան միակ յոյսն է ճնշւածների համար:

Հա՛յ ժողովուրդ, քեզ անգութ բռնակալը թնդանօթի բերանին է բռնում, սրի անցկացնում, բարձրացնում կախաղան, տանջում բանտերում, ծովը նետում, շղթայակապ անապատներ աքսորում. նրա զօրքը և նրա թիկնապահ աւազակ քրդերը այրում են քո տունը, յափշտակում գոյքդ, անպատւում ընտանիքդ, իրենց ձիերի ոտի տակ տրորում քո արիւն քրտինքով մշակած արտերը, քշում տաւարդ, սովի ու գաղթի մատնում քեզ: Ուրեմն ի՞նչ է մնում քեզ անել. մահը քո շուրջն է. լաւ է մեռնել ազատութեան կռւում, քան անարգ բռնութեան ձեռքում: Թո՛ղ աւերւած տունդ, փշրի՛ր անգործութեան մատնւած գութանդ, սար ու ձոր ցրւիր, կազմի՛ր հրոսակային խմբեր և սկսիր խմբային, պարտիզանական (մասնակի) անհաշտ կռիւ քո արիւնարբու թշնամու դէմ. քո անմեղ արիւնդ թափիր

ստոր Եւրոպայի գլխին։ Այժմ արեան և փլատակների մէջ թաղուած Հայաստանը պէտք է ծածկի բազմաթիւ հրոսակային խմբերով. հայդուկների արշաւանքներն և ահաբեկիչների զէնքն յուսահատ ժողովրդի հրոսակային խմբերի հետ պէտք է հարուածեն հրէշ կառավարութեանը, մինչև որ նա փչի իր ժանտահոտ շունչը. Հայ ժողովուրդ, դու արդէն ուժասպառ էիր արել նրան, երբ վրայ հասան կրետացին, դրուզը, մակեդոնացին, արաբը և վերջապէս Երիտասարդ Թիւրքիան։ Նա պիտի սատկէր, եթէ Եւրոպան արտակարգ միջոցներով չպահպանէր նրա արուեստական կեանքը։ Սակայն նա երկար չի քարշիլ իր անիծեալ գոյութիւնը։

Հայ ժողովուրդ, դու արդէն տուիր մահացու հարուած մարդակեր բռնակալին, այժմ դու պէտք է լարես քո բոլոր ոյժերը, մոռանաս ամէն ինչ և նուիրուես միմիայն սուրբ յեղափոխութեան. դա է քո փրկութեան միակ ճանապարհը։ Ցոյց տուր, որ մեռնել քո մարդկային իրաւունքներդ զէնքով պաշտպանելիս գերադասում ես սպանդանոցում մորթուելուց։

Ցիրուցան հայե՛ր, դո՛ւրս եկէք ձեր ապահով նիրհից. տաճկահայի օրհասը մօտ է. շտապէ՛ք օգնութեան։ Յեղափոխութիւնը զէ՛նք, մարդիկ և միջոցներ—է պահանջում։ Լոկ խօսքով մի ժողովուրդ երբէք չի փրկուիլ։ Կռիւ, անհաշտ կռիւ տմարդ բռնութեան։

Ի զէ՛ն, ի զէ՛ն հայ ժողովուրդ։

ԱԲՐՕ

(ՄԿՐՏԻՉ ՍԱՀԱԿԵԱՆ)

Հայ յեղափոխական աշխարհի երկնակամարից մի աստղ ևս սահեցաւ՝ յետքից պայծառ գիծ թողլով. հայ յեղափոխական կեանքի փշոտ ասպարիզում մէկն էլ ընկաւ՝ կռիւ տալով մինչև վերջ...

Դեռ մեր սրտերում՝ մեր անմոռանալի ընկեր Աւօյի պատճառած կսկիծները իրենց թարմութիւնը չկորցրած՝ նոյնանման հանգամանքներում ունենում ենք և մի ուրիշ կորուստ՝ որը նոյնքան անփոխարինելի է, նոյնքան ցաւալի...

Սասնոյ ձիւնապատ սարերից մին առյաւէտ թաղեց իր փլատակների տակ՝ ձիան հիւսի ներքև մեր թանկագին ընկեր Աբրօյի—„Հայ Յեղափոխական Դաշնակցութեան„ Տարօնոյ և Սասնոյ գործիչներից մէկին։ Այս մասին մեր ստացած նամակներից մին հետևեալ կերպով է պատմում տխուր եղելութիւնը, որը կատարելապէս ստուգելու դեռ ևս սպասում էինք մեր միւս ընկերների տեղեկութիւններին։ Մարտ ամսոյ 18-ին Ս գիւղի մէջ տեղի ունեցածէ նդհանուր ժողովէն յետոյ Աբրօն հետը առած Տ. Թովմաս էֆէնտին և մի քանի գիւղացիներ, ճանապարհ կիյնայ դէպի ..... գիւղը. գիւղին մօտիկ՝ առաջ կանցնի Թովմաս էֆէնտիի հետ. Մ է զ ր է ո ւ ր ըսւած բարձր սարէն իջնելու ժամանակ՝ երկուսով կը թաղուին ձեան հիւսի տակ։ Հակառակ հարիւրաւոր սասունցիներու կատարած պեղումներուն անոնց մարմինները գտնուեցան հազիւ 45 օր յետոյ և ամփոփուեցան ի Հող ..... գիւղի մի ձորակի մէջ... Սրտաշարժ էր յուղարկաւորութեան պարզ հանդէսը. մինչ լեռնցի քահանայք աղօթքներ կը մրմնջէին, անդին հարիւրաւորներ կարտասուէին...

Աբրօն կարողացել էր փոքր ժամանակի մէջ անոնց սրտին և մտքին մէջ միանգամայն գրաւել իր արժանի տեղը։ Արդարև, ով անձամբ ճանաչել է նրան, ով մօտից ուսումնասիրել է նրա ներքին աշխարհը, համարձակ կարող է վկայել, որ նա մեր սակաւաթիւ յեղափոխականներից էր. յեղափոխական՝ բառի բուն նշանակութեամբ, ամբողջապէս նուիրուած տանջուող ժողովրդի ազատութեան վեհ գործին...

Թողնելով պատեհ ժամանակի մանրամասն կենսագրութիւնը, առ այժմ հարկաւոր ենք համարում մի համառոտ տեսութեամբ ծանօթացնել նրան ընթերցողներուն։

Հանգուցեալը 35 տարեկան, ծնուել էր Փոքր-Ասիոյ Շապին-Գարահիսար քաղաքում, բայց զանազան հանգամանքներով, իր կեանքի մեծագոյն մասը ընտանիքի հնոցում անցէր կացրել գլխաւորապէս Սեբաստիայի Թամզարա գիւղում և Կիրասոնում՝ սև ծովի ափին։ Վերոյիշած տեղերում հայ և մահմեդական տարրերի մեծամասնութիւնը ճանաչում է նրան և կը խոստովանի, որ Մկրտիչ Սահակեան եղել է իր բնակած տեղերում ամէնից յարգուած և սիրուած անձնաւորութիւնը... Բնական ընտիր յատկութիւնների հետ, ձեռք բերելով և տեղական պահանջներին համապատասխան միջնակարգ ուսում, Մկրտիչ Սահակեան վայելելիս է եղել առհասարակ գործունեայ մարդու համբաւ. նրա գլխաւոր պարապմունքը, մինչև 92 թուականը, եղել է վաճառականութիւն, բայց բովանդակ կեանքում, իր աջակցութիւնը և միջոցները գործ է դրել յօգուտ յեղափոխական գործի. նպատակ ունենալով ի վերջոյ կ ա ր մ ի ր յ ե ղ ա փ խ ա կ ա ն դառնալ՝ ինչպէս ինքն էր ասում սովորաբար։

92 թուականի գարնանը այդպիսի մտքերով նա անցաւ Փոքր-Ասիայից Կովկաս և հաստատուեց Բաքու քաղաքում, ուր կարճ ժամանակամիջոցում նրան յաջողուեց նաւթի գործարաններից մինում գտնել բաւական յարմար պարապմունք. հենց այդ էլ վճռեց նրա բաղդը, բացեց նա առջև գաղափարների նոր աշխարհ, գործունէութեան նոր ասպարէզ։

Ծանօթանալով տեղական ինտէլլիգէնցիայի և մասնաւորապէս Բաքուի մեր ընկերների հետ, մտնում է „Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ կազմակերպութեան մէջ։ Նա շատ շուտով արժանացաւ մերոնց առանձին համակրանքին։ Հետաքրքիր և մխիթարական էր տեսնել, թէ նորեկ երիտասարդը իր պաշտօնը լիովին գործադրելուց յետոյ, ինչպէս էր ընկերանում գործարանի բանուորների հետ, գիշերները սրանց հաւաքում զլխին և գրել կարդալ սովորեցնում. պատմելու և ոգևորելու ընդունակ՝ նա իւրաքանչիւր շաբաթ համարեա մի քանի անգամ ժողովների էր գնում և ամենքի հետ քաղցր զրոյց անում իր սրտին մօտիկ առարկայի մասին։ Նրա ասողը շիրին (քաղցր) էր, ինչպէս ասում է ժողովուրդը և այդ պատճառով էլ յա-

ջոլել էր նրան մի քանի գործարաններում՝ հիմնել բանուորների օժանդակիչ խմբեր, որոնք նպատակ էին դնում դրամական միջոցներով օգնել Տաճկահայաստան գնացող ինտելլիգենտ գործիչներին, կամ կամաւորներին։

Յարատևութեամբ շարունակելով սկսած գործը, Աբրօն—այսպէս է նրա կեղծ անունը—94 թուականի աշնանը մեր մի ուրիշ ընկերի հետ դուրս է գալիս արդէն Բաքուից, ուղիղ Տաճկահայաստան անցնելու և գործելու մտադրութեամբ։ Յուզիչ էր բոպէն, երբ երկաթուղու կայարանում հաւաքած բանուորների և համակրողների խումբը նրան ճանապարհ էր դնում անվերջ և սրտագին բարեմաղթութիւններով։

Ճիշտ այդ ժամանակ տեղի էին ունեցել Սասնոյ անցքերն։ Զմեռը մօտ էր, իսկ մի քանի հոգի փախստական սասուցիներից նկարագրում էին, թէ այնտեղ Սասնում ինչ անտանելի դրութեան մէջ էր թշուառ ժողովուրդը. կենդանի մնացածներին մահ էր սպառնում սովից և ցրտից։ Զկամենալով լքանել ամեն բանից զրկուած Սասնոյ հերոս ժողովրդին, „Դաշնակցութիւնը“ որոշեց ընդ փոյթ օգնութեան հասնել նրանց և իր սուղ միջոցներից մի կարևոր գումար յանձնեց Աբրօին, որը մեր մի ուրիշ ընկերոջ հետ, մի փոքրիկ խմբով 95 թուականի յունուարին անցնում է Ռուս-Տաճկական սահմանագլուխը. սրանք իբրև յեղափոխական առաքեալներ, մտնում են այն աշխարհը, ուր ամենից աւելի անարգուած է հայը և ուր անարդարութիւն և խաբեբայութիւն ձեռք ձեռքի տուած նախճիրներ են գործում շարունակ։

Յաջողութեամբ մուտք գործելով՝ մեր ընկերները ամեն տեղ պատահում են հայ ժողովրդի համակրանքին և սիրալիր ընդունելութեան. նրանք կարողանում են հայ գիւղացուն ամեն ուրեք ոգևորել և ներշնչել հաւատ դէպի գործը—դէպի յեղափոխական կռուի յաղթանակը։ Բացի կազմակերպական անհրաժեշտ գործերից՝ որոնց մէջ մեր ընկերները ունենում են առանձին յաջողութիւն, նրանք մեծապէս նպաստում են և Սասնոյ քննիչ յանձնաժողովին, յորդոր կարդալով ամենքին, որ աներկիւղ իրենց բողոքները պատրաստելով կանոնաւոր բողոքագրերով հասցնեն նրա ձեռքը։ Նոյն ծառայութիւնը արին նաև եւրոպական թերթերի թղթակիցներին, մասնաւորապէս „Դէյլի-Տելեգրաֆի“ թղթակից Դիլլոնին։

Պատահած տեղերում իրենց այցելութիւնը միշտ արդիւնաւէտ դարձնելով՝ մեր ընկերները մարտ ամսի սկզբներում հաղիւ մտնում են Սասուն, ուր ժողովուրդը դժուար կացութեան մէջ անհամբեր սպասում էր նրանց գալստեան. այն ժամանակուանից մեր ստացած նամակները նկարագրում են՝ թէ ինչ ազդեցութիւն գործեց մերոնց մուտքը այնտեղ։ Ժողովուրդը իրեն կատարելապէս մխիթարուած էր զգացել տեսնելով, որ „Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը“ շտապել էր իրապէս սփոփել իրեն, դրամական անմիջական օգնութիւն հասցնելով։

Իրենց յանձն առած միսսիան Սասնում յաջողութեամբ վերջացնելուց յետոյ՝ մեր ընկերները մի քանի հանգամանքներից ստիպուած ժամանակաւորապէս թողնում են Սասունը, իջնում . . . . և այդտեղ բաժանուում՝ երկու խմբի, տարբեր կէտերում գործելու. նպատակով։ Աբրօն կազմակերպական անհրաժեշտ գործերով վերադառնում է Կովկաս, իսկ մեր միւս ընկերը անցնում է այլ շրջան։

Մնալով Կովկասում 2–3 ամիս, Աբրօն կազմակերպում է հայդուկային խումբ և պատրաստւում երկրորդ անգամ անցնել սահմանը. երբ մի քանի անյուտաձգելի գործեր ստիպում են նրան խումբը թողնել ուրիշ ընկերի ղեկավարութեան և շտապել երկիր... Խ...ում նա իր հետ վերջ է առնում „Դաշնակցութեան“ պատրաստ մի հայդուկային խումբը և անցնում է Տարոն այն ժամանակ՝ երբ արդէն ուրիշ տեղերում կոտորածներ սկսել էին։ Իրենց այդ դրութեան մէջ՝ խումբը կանոնաւորապէս զինուած, կարողանում է շատ տեղեր պաշտպանել ժողովրդին քրդերի յարձակումներից. իսկ երբ խաղաղութիւնը մի փոքր սկսւում է վերահաստատուել, Աբրօն խմբով անցնում է Սասուն—իր գործունէութեան բուն կէտը։ Եւ ահա հաղիւ անցած մի քանի ամիս, հաղիւ մեծ գործի նախապատրաստութիւնները վերջացրած, գործունէութեան ամենատաք ժամանակին զոհ է գնում գժբաղդ պատահարի, անհուն վիշտ պատճառելով իր ընկերներին և ընդհանրապէս ամբողջ կազմակերպութեան։

Այսպիսի տխուր վախճան վերին աստիճանի ցաւալի է և այն տեսակէտից, որ յեղափոխական անձնուրաց գործիչներին չի վիճակւում դեռ ևս գործել երկար և վերջում ընկնել կռուի դաշտում կամ կախաղանի վրայ... Սիրելի Աբրօի միակ ցանկութիւնն էր—ինչպէս կարդում ենք իր մի նամակում—„ընկնել հրացանը ձեռքին...“ դժբաղդաբար դեռ շատ վաղ մուրացը աչքերին՝ նա թողեց գործունէութեան ասպարէզը...

Արտաքին մարմնական դեղեցկութեան հետ հանգուցեալը միացնում էր և բնաւորութեան գեղեցկութիւն։ Զափազանց ընկերական էր, համարձակախօս, անկեղծ և որ ամենից գլխաւորն է՝ շիտակ ամեն բանի մէջ։

Հանգի՛ստ ոսկորներիդ, անմոռանալի ընկե՛ր, քո յիշատակը ոգևորում է մեզ. քո օրինակը սի՛րտ է տալիս ամենքին, մենք վաղ թէ ուշ կիրագործենք քո կըտակը, իսկ տանջող հայ ժողովուրդը երախտագիտութեամբ կը յիշե քո անունը։

ՄԱՀԻԱՆ ՎՃԻՌ

—

„Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ Կարնոյ Կեդրոնական Կոմիտէն ի նկատի ունենալով,

Որ Շաքիր փաշայի հրամանով թիւրք ոստիկանութեան մէջ երեք ամսէ ի վեր պաշտօնի հրաւիրուած բօշիս Մկրտիչը (Կարինում Խուլ անունով յայտնի) արտակարգ եռանդ գործ կը դնէ յեղափոխական գործիչներուն գտնելու և ձերբակալելու համար,

Նկատելով, որ իբրև մտրիկ ազգական սպանեալ մատնիչ Յարութիւն Տէր-Սարգսեանի, բօշիսի պաշտօն ստանձներ է առաւելապէս մի շարք անձնաւորութիւններէ վրէժ լուծելու համար,

Նկատելով, որ դեռ մի քանի օր առաջ Իլիճէ գիւղին մէջ ինքզինքը յեղափոխական ձևացնելով՝ յաջողեր է ինչ որ միամիտ երիտասարդ բերնէն անմիտ խոստովանութիւններ քաշել և անոնց հիման վրայ՝ իբրև

յեղափոխական՝ ձերբակալելով ուղարկեր է քաղաքի բանտը և վերջապէս,

Նկատելով, որ շարունակ հալածելով իր ազգակիցները, հրաւիրեր է իր վրայ հայ հասարակութեան արդարացի զայրոյթն ու զզուանքը՝

Մահուան վճիռ արձակեց անոր դէմ։

ԿԱՐՆՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷԻ

(„ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ“ № 6, 30 (Ն. տ.) Մայիսի։)

***

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ

—

1/13 Յունիս 96 թ.

„Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ Կեդրոնական Կոմիտէի որոշմամբ՝ տեղական „Վարդանեան“ խմբի ահաբեկիչներէն մին ամսոյս 16-ին, երեկոյեան ժամը 7-ին (ը. ե.) գնդակի հարուածով փորձեց սատկեցնել մատնիչ փոլիս Մկրտչին, բայց հարուածը դըժբաղդաբար չունեցաւ փափագելի արդիւնքը։ Սարսափը մեծ եղաւ, անյոյսներու մէջ անգամ փաստը վերին աստիճանի ոգևորիչ էր ժողովրդի համար։ Ահաբեկիչը ազատ է։

Կառավարութիւնը կատղած՝ գործողութեան յաջորդ օրը դիմեց իր սովորական անարգ միջոցներուն. մի կողմէ մատնիչ ոստիկանի ցուցումներով իբրև կասկածելի մեղսակիցներ, ձերբակալեց մօտ 20 անձնաւորութիւն, միւս կողմէ կատաղաբար սկսաւ տները խուզարկել ահաբեկիչները գտնելու նպատակով։ Ո՛չ մի փողոց ազատ չըմնաց խուզարկութենէ համարեա։ Այնուամենայնիւ կառակ ձեռք առնուած ծայրայեղ խստութիւններուն, մինչև օրս՝ երկու շաբաթ անցած, ահաբեկիչը և ուրիշները կը շարունակեն շնորհիւ վեհափառ սուլթանի ազատ մնալ կառավարութեան քթի տակ։

Ձերբակալածներուն՝ մանաւանդ 5-6-ին, բանտի մէջ կենթարկեն սաստիկ տանջանքներու՝ էարիքի աղբիւրը գտնելու և միանգամայն ցամաքեցնելու համար. յիմարները տակաւին չեն հասկցեր, թէ յեղափոխութիւնը եօթն գլխեան դև է, թէ մի յեղափոխականի ընկնելով՝ անոր տեղ կը կանգնին իսկոյն մի քանիները։

Իւրաքանչիւր օր ապահովութեան համար սուլթանին աչքի լոյսի հեռագիրներ տուող նահանգապետ Ռէուֆ փաշայի բարկութիւնը անսահման է և այդ գլխաւորապէս անոր համար, որ միևնոյն օրայ մէջ միաժամանակ տէրրորական գործողութիւններ կը կատարուին թէ Պոլսոյ և թէ Կարնոյ մէջ։ Զուգադիպութիւն, որ թողուց մի առանձին ազդեցութիւն և՛ հայ և՛ թիւրք հասարակութիւններու վրայ։

Զափազանց բնորոշ են կատարուած տէրրորի առիթով նահանգապետի հանդիսաւորապէս արտասանած խօսքերը։ „Ջանը“, պու նէ՞ էտէպսիզ միլլէթ, հալէա թէրպիյէ օլմատլար. պիր պուէյուդ էրմէնի գալը՝ կինէ բահաթ տուրմայօլար“։ (Ի՞նչ անամօթ ազգ են սոքա. դեռ և-ս խելքի չէկան—կոտորածները կակնարկէ, մէկ ու կէս հայ մնաց, դարձեալ հանգիստ չեն մնար)։

Հայ ժողովուրդ, այդ խօսքերը գովեստ են քեզ համար, այո՛, դու այնքան լիրբ ես գծուած նահանգապետի կարծիքով, որ չանարգելով բիւրաւոր նահատակներիդ յիշատակը, որ խոյս չտալով քո անբռնաբարելի իրաւանց պաշտպանութեան համար յայտարարած սրբազան կռուէն, որ չդաւաճանելով ինքդ քեզ՝ կը շարունակես քո ծոցէն դուրս տալ անձնուրաց որդիք, տանջուող ժողովրդի ազատութեան գաղափարով տոգորուած յեղափոխականներ։

Հայ յեղափոխական, սի՛րտ առ, տես ի՞նչ կըսէ Մեծ-Ոճրագործի ներկայացուցիչը. մէկ ու կէս հայ ալ մնաց՝ քո մղած կռիւդ միշտ կռիւ է...

Կեցցէ՛ յեղափոխութիւն,

Կեցցէ՛ ահաբեկիչ։

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

—

8/20 Մարտ 96 թ.

Ուրբաթ օր Քիլիսի մէջ ալ դէպք պատահեցաւ, երեք օր տևեց, տներու կէսն, ու գրեթէ բոլոր շուկան կողոպտուեցան։ Վաւերական աղբիւրներէ առնուած լուրերուն համեմատ մարդու կորուստը 120 է, թէպէտ 400 ալ լսեցինք։ Կըսուի թէ կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առեր է ոճրագործները պատժելու համար, բայց խաբեբայութիւն է։ Կըսուի թէ՝ Սուետիոյ և Էլպէզի կողմերը խառնակութիւն կայ, Զմիւռնիոյ գունդը, որ Այնթապ էր՝ հոն գնաց։

Մարաշի մէջ Սամուէլեան Սարգիս և Տ. Ղազարեան Դաւիթ էֆէնտիներն և ուրիշ շատ մը երևելիներ մեռած են, իսկ մնացեալներէն աչքի զարնող անձնաւորութիւնները կը ծեծուին, կը չարչարուին բանտի մէջ։ Հոն ժողովուրդը շուկայ կրնա իջնալ եղեր։ Ամեն տեղ ամենայետին աստիճանի թշուառութիւն։ Ուլնիա, Մարաշ, Այնթապ թշուառութիւն և հիւանդութիւն կը տիրէ, ծաղիկ և թիֆօ։ Մարաշի բժիշկներն իսկ վարակուած են։ Իտալացի Փասքընոլի և ամերիկացի Շէֆիրի բժիշկներն Ուլնիա են, 6 հատ ալ Պէյրութէն ուղղուեցան։ Օրական 50 մահ կը պատահի եղեր, մնացածն ալ Աստուած պիտի ջարդէ։ Հիւպատոսները՝ անգլիական, ֆրանսական և իտալական դեռ Ուլնիա են. հաշտութենէ ետքը 9 հոգի սպաննուեցան Ալպիսթանի ճամբուն վրայ, այս պատճառաւ էկրցան հեռանալ, թէև գործ ալ չտեսան՝ բայց նիւթական օգնութիւننին անուրանալի է... Ըստ իս, այս կողմերու հայերէն յոյսերիդ կորեցէք... ոչ մարդ մնաց և ոչ հարստութիւն, ասոր լաւ հաւատացէք, ինչ որ մնաց այն ալ Աստուած կը ոչնչացնէ։ Այնթապ, որ բաղդադմամբ բախտաւոր գտնուած է, այսօր 5000 կարօտեալ ունի, որոնք օրական երեք մանկըր նպաստով կապրին, կառավարութիւնն ոչ մի օգնութիւն չմատակարարէլէն զատ, հին և նոր տրոյ հաւաքման մասին խստութիւն կը բանեցնէ, ալ մերինը մահ է, ոչ այլ ինչ։ Այնթապ եղող բանտարկելոց մնացածն ալ աւադ հինգշաբթի օրը Ռերիա տարած են, շատ ծիծաղաշարժ են բանտարկութեան պատճառներն, որպէս թէ Ուլնիա իրենց տեղ փոխանորդ զինուոր ղրկած են, ապստամբած, մարդ սպաննած, վիրաւորած, կեցցէ՛ Անգլիա և Հայաստան կանչած եղբայրներ։

Այս քաղաքներու մէջ հայու քով հարստութիւն չմնաց... „Կարմիր Խաչի Ընկերութեան“ 6 անդամներ եկան, 3-ը Մարաշ և 3-ը Եդեսիա գնացին։

Զմիւռնիոյ անգլիական հիւպատոսն Եդեսիոյ կողմերը գնաց և վերադարձաւ, բարի մարդ չերևցաւ մեզի...

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Թիւրքիան յաղթէ յաղթւի ալ մէկ է, քանի որ քաղաքակիրթ աշխարհը կաշխատէ ամոր ամբողջութիւնը պահել, իբր նմոյշ բարբարոսութեան, ինչպէս զազանանոցներ կը պահեն մեծ քաղաքներու մէջ։

Կրետէն սուլթանի քիթը չախչախեց, ամոր վայրագ զինուորներուն մեծ կորուստ պատճառելով։ Երբէք չանսաց Եըլդզի անպատիւ խոստումներուն, որովհետեւ դարերէ ի վեր Թիւրքիոյ խարդախութեան եւ նենգամտութեան նշաւակ եղած է։ Եւրոպական լուրջ թերթ մը կը գրէ՝ „Թիւրքերը ընաւ համոզումնին չեն փոխեր, երբ այնքան զօրաւոր չեն զգար զիրենք՝ կոպասին, բայց երբ զազանութիւնները վերսկսելու առիթը ներկայանայ, երբէք չեն փախցներ։ Այս եղած է իրենց ամբողջ պատմութեան շարքը“։

Կրետացիներուն յամառ դիմադրութիւնը եւ իրենց անակնկալ յաջողութիւնները սուլթանի՝ արդէն սրիկայութեան մէջ ընկած ուղեղին վրայ, մեծ ցնցում առաջ բերած են։ Կրետացիները այժմ հաւէքայի դաշնագրով զոհ չեն ըլլար. Թիւրք կառավարութիւնը յօժար է անոնց ամէն պահանջները կատարել, միայն թէ զինաթափ ըլլան եւ խնդիրը աւելի չի ծանրանայ։

Մէօրճի Պէրովիչ, Սամոսի կառավարիչը, որ Կրետէի ընդհանուր կառավարիչ կարգուած է, հասաւ Դանիա. Թիւրքերը պաղ ընդունելութիւն ըրին։ Պէրովիչ հրաւիրեց կրետացի պատգամաւորները ընդհանուր ժողով գումարել։ Բայց քրիստոնեայ երեսփոխանները չի պատասխանեցին, բացի մէկ քանիներէ։ Նոր կառավարիչը իր հետ բերած է նաեւ համիդի „բարեացակամ խոստումները“ Կրետէի ընակիչներուն համար։ Բարեբաղդաբար Եըլդզի „բարի տրամադրութիւնները“ ապստամբ հրացաններու շառաչիւնին մէջ կը խեղդուին։

Դեսպանները իրենց հիւպատոսներուն միջոցով խորհուրդ տուին կրետացիներուն դադրեցնել թշնամութիւնները, ժողով գումարել եւ իրենց պահանջները ներկայացնել, հակառակ պարագային իրենց իրաւունքներն ալ կը կորսնցնեն։

Քրիստոնեայ երեսփոխանները, որոնք ազգային ժողով գումարելու ամէն հրաւէր մերժելով լեռներու մէջ յեղափոխական ատեան կազմած եւ կղզիին Յունաստանի միացումը հռչակած էին, դժբախտաբար տէրութիւններու ճնշման ներքեւ իրենց իրաւունքներուն եւ երազներուն լիովին պակսումը չեն տեսներ։

Լուր կը շրջէր, թէ Ռուսիա խորհուրդ տուած է Ֆրանսայի գրաւել Կրետէն, ինչպէս Անգլիան գրաւած է Կիպրոսը եւ Եգիպտոսը։ Կրետէի Ֆրանսական նաւային սպաները, ի պատիւ Թիւրք իշխանութեանց խնջոյք մը տուին, ուր բաժակ առաջարկեցաւ Ֆրանսո-ռուսա-թրքական դաշնակցութեան եւ եռանդագին ծափահարեցաւ Թիւրք պաշտօնեաներու կողմէ։

Կրետէի երեսփոխանականները երենց անվստահութիւնը յայտնեցին Թիւրք կառավարութեան նկատմամբ եւ որոշեցին ժողով գումարել, եթէ տէրութիւնները երաշխաւորեն իրենց կեանքը։

Աթէնքի „Ասի“ լրագրին գրածին նայելով, երեսփոխանական ժողովը Դանիա իր նախապատրաստական նիստին մէջ քանաձեւեց իր պահանջները, որուն գլխաւոր կէտերն են՝

Քրիստոնեայ կառավարչի մը անուանումը Յունաստանի հաստատութեամբ եւ տէրութեանց մասնաւոր երաշխաւորութեան տակ.

Տեղական ոստիկանութեան մը հաստատումը.

Հանրային պաշտօնեաներու մասնակցումը՝ ժողովրդին թոյլտ տամիատ.

Տնտեսական անկախութիւն, տարեկան իբր տուրք՝ 10000 ոսկի վճարելով Դրան.

Դանիայի մէջ վճռաբեկ ատեանի մը հաստատումը.

Վերջապէս տէրութեանց երաշխաւորութիւնը իրաց նոր վիճակին համար։

* * *

Տեղի սղութեան պատճառով „Թիւրքիոյ շուրջը“ ստիպուեցանք համառօտել, յաջորդ համարին վերապատմելով շարունակութիւնը։

Մամուլի տակից լոյս տեսան՝ „Կոտորածից առաջ, Կարնոյ կոտորածը, Զինագործ քահանայ և Կորկոտեան“՝ ամփոփուած մի գրքում։

—

Օգտուելով դէպքից յայտարարում ենք նորից, որ „Դաշնակցութեան“ բոլոր հրատարակութիւնները ձրի են։

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կեդրոնական մնդուկի մէջ ստացուած են.

Մկտչ 50 օսմ. ոսկ։

Պ. Տ. Գ.-ից 500 ռուբլի, Ախր. Ք.-ից 148 ռուբ., Բժշ. Տ. Դ. 10 ռուբ., Այգեստանից 189 ռուբ., Մար-Շիմոնից 35 ռուբ., Աշակերտներից 26 ռուբ., Փայլակից 8 ռուբ.։

Դ.-ից Ֆարհադի միջոցաւ մի խումբ մարդկանցից 26 ռուբ., Նոյն տեղից՝ Ասլանից 1 հրացան, Բարձր տեղից Ֆարհադի միջոցաւ Ծերիրից 48 ռուբ., երիտասարդներից 80 ռուբ., Կայծիկից 18 ռուբլի։

Ֆրանս. Նանսի քաղ. 12 հայ ուսանողներից 46 ֆր.։

Վրէժի կեդրոնական մնդուկում ստացուած են.

Հիւսիսային Բևեռի հայ հասարակութիւնից 400 թուման, Ն. քաղ.-ի Վտակ խմբից 35 ռուբ., Հ. Ն. Ք.-ի կանանց խմբից 30 ռուբ., Ներկայացումից 124 թուման, Վրէժ Ք.-ի Միկրոբ խմբից երկու բերդան հրացան և 500 փամփուշտ, Ս. Գ. 20 ղռ., Բագին 10 ղռ., Սիրող 10 ղռ., Ա. 15 ղռ., Խ. 20 ղռ., Համակրող 20 ղռ., Ս. Բ. 40 ղռ., Ա. Ց. 30 ղռ., Ն. Մ. Ա. 10 ղռ., Մուժումբարցի 20 ղռ., Ղ. Ծ. 20 ղռ., Ջաւահիր 20 ղռ., Թ. Կ. 10 ղռ., Գ. Ս. 10 ղռ., Մ. Փայտակարանցի 10 ղռ., Ս. Ա. 10 ղռ., Արմէնուհի 5 ղռ., Խանագեահցի 10 ղռ., Ե. Գ. 10 ղռ., Իսկուհի 15 ղռ., Բ. Մ. 8 ղռ., Ա. Մ. 2 ղռ., Ոմն 5 ղռ., Զինւոր 6 ղռ., Ոմն 3 ղռ., Ոմն 20 ղռ., Աղունիկ 10 ղռ., Զ. Ց. 10 ղռ., Օվչին 15 ղռ., Կուն. 10 ղռ., Շիր 12 ղռ., Զուիֆ 10 ղռ., Ասլան 20 ղռ., Բիւլբիւլ 20 ղռ.։

Ռումինիայի Պ. քաղ. „Դաշնակցութեան Բանւոր խմբից“ 320 ֆրանկ։

Արշակաւան քաղ. Կեդ. մնդուկի մէջ ստացուած են.

Ասեղ 10 դհ., Աբրինիչեր 108 դհ., Արշալոյս խ. 70 դհ., Միսաք խ. 40 դհ., Սերոբէ 10 դհ., Կարմիր քիւրք 30 դհ., Արդարասէր Ա. խ. 70 դհ., Ուժանակ խ. 20 դհ., Արծիւ խ. 50 դհ., Ճանկոյի խ. 80 դհ., Ծաղիկ խ. 140 դհ., Կեղծ 20 դհ., Ցուգիթ 20 դհ., Արծիւ խ. 50 դհ.. Ճանկոյի խ. 25 դհ., Միսաք խ. 40 դհ., Մամիկոնեան Բ. խ. 20 դհ., Արդարասէր Ա. խ. 35 դհ, Թնդանօթ 20 դհ., Գարէն 10 դհ., Ռուիծ 20 դհ., Կրաւատ 10 դհ., Թռուցիկ 10 դհ։

Քուշանաց քաղաքէն Տիարեան 108 դհ., Նուիրատու 40 դհ.։

Սիւնիք քաղ. մնդուկի մէջ ստացուած են.

Մարակ խմբից 4½ մէճիտ, Որսորդ 12 մէճիտ։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նուիրատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան սպատ տպարան։